

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ ԵՒ ՔՆՆՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

Եգիպտոս իբրայական ժողովրդեան հայրենիք եղեր էր, և անկէջ ետքն ալ շատ յարաբերութիւն ունեցեր էր իրեն հետ, հետեւաբար իւր պատմութիւնն և յիշատակարաններն Ս. Գիրքը հասկընալու մեծապէս կը նպաստեն. մանաւանդ Նոնիդոց, Եսայեայ, Երեմիայ, Թադաւորութեանց և Մնացորդաց գրոց մէջ շատ տեղեր կը հանդիպին՝ որ հին Եգիպտոսի իրաց վերայ ստոյգ տեղեկութեամբ պիտի լուսաւորուին և պիտի մեկնուին: Մականջ գրեթէ մինչև այս դարս սակաւ ինչ տեղեկացան Փարաւոնաց ժամանակին հին Եգիպտոսի վերայ, այն է՝ բոս բաւականի բազմութիւ խառնակ իրեր Մանետոնի և ուրիշ ամենահին մատենագրաց առասպելաց հատուածոցը հետ խառնուած, և ուրիշ քանի մի փառաւոր յիշատակարանք թէպէտ կան (ինչպէս բուրգեր և կոթողներ), բայց ծածկագիր ըլլալուն պատճառաւ պատմութեան և հնախօսութեան ամենին օգտակարութիւն մը չունին, զոր և մեհենագիր կը կոչեն, որով անկարելի էր հասկընալ անոնց մէջ քանդակուած յուշատակագիրները. սոյն պէս էին մանաւանդ նաև գերեզմանաց մէջ և ուրիշ տեղեր գտնուած պապիրոսներն:

Մեր դարուն պահուած էր թէ գրեթէ անհաւատալի բազմութիւնն յիշատակարանաց՝ ի լոյս բերել, և թէ այն նշանագրաց բանալին գտնել և գրեթէ այն յիշատակարանաց լեզուն լուծել, որը մինչև հիմա հմուտ անձանց մեծ ջանքն հանդերձ մունջ և անիմաստ մնացեր էին, նախ Եգիպտոսի մէջ գտնուած յիշատակարանաց վերայ սուղ ինչ խօսինք և յետոյ թէ ինչպէս ուսեալ անձինք կրցան վերջապէս մեհենական նշանագիրը կարգալ:

Նաբոլէոնի զինուորաց յեգիպտոս արշաւանքն (1798-1800) սկզբնա-

պատճառ ելաւ այն երկրին մէջ գրտնուած յիշատակարանաց վերայ աւելի ևս քննութիւն ընելու: Բազմաթիւ գիտնաւորք այս նպատակաւ դադարեալան բանակին ընկերացին. և Եգիպտոսի երկրորդ ամէն կողմ՝ բոս կարծելոյն քննեցին, անոր ամենահին քաղաքաց մնացորդքը, տաճարաց աւերակները, թագաւորաց գերեզմանները և ուրիշ շատ իրեր. դժագրելով նաև յիշատակարանաց և անընթեռնի մակագրութեանց նկարեալ պատկերները: Ասոնց ամենուն մանրամասն լուսաբանութիւնը քիչ վերջը Գալղիոյ տէրութեան խնամքով և ծախքով հրատարակուեցաւ «Նկարագիր Եգիպտոսի» անուամբ: Այս քննութեանց յաջողութենէն հմուտք և հնագէտք վառուած, մանաւանդ 1822 ին Շամպոլլիոնի նշանագիրը ընթեռնելու բանալին գտնելէն յետոյ, շատ ճանապարհորդութիւններ յեգիպտոս կատարեցին, և ամէն օր նորանոր յիշատակարաններ գտան, յորոց շատը եւրոպա բերուեցան: Այս յիշատակարաններէն ոմանք ամենամեծ վիմաց քանդակուած կտորներ են, և Յունաց և Հռովմայեցւոց յիշատակարաններէն շատ աւելի մեծ, ինչպէս են բուրգերն և սփինքաներն և ուրիշ գտնուածներ հին քաղաքաց և տաճարաց աւերակաց մէջ. ոմանք ալ փոքր և առանձնական իրեր են, որ գլխաւորապէս ամենահին գերեզմանաց մէջ գտնուած են և մինչև հիմա ալ կը գտնուին, ինչպէս օրինակի համար, Նկարք և քանդակք, որոնք Եգիպտացւոց այլ և այլ գէպպեր, արարողութիւնները և սովորութիւնները կը ներկայացընեն. զանազան գործիներ՝ այլ և այլ արհեստից, բժշանք, զարդեր, մատաններ, ճճիներ և ուրիշ նման բազմաթիւ իրեր. սակայն ամենէն աւելի պապիրոս վերայ ձեռագրաց բազմաթիւ կտորներ,

որոնք յայտնի է թէ ամենահին համա-
րուած ամէն մագաղաթեայ գրուած-
ներէն շատ դար առաջ են , և այսու
հանդերձ մեծաւ մասամբ անարատ
մնացած և ամենալաւ պահուած են ,
ինչպէս որոշ և պայծառ գրուածքէն
կ'երևի :

Այս պապիրներէն շատը յերոպո-
լիսէի գլխաւոր թանգարանաց զարդ
եղան , մասնաւորապէս Բրիտանական ,
Պերդլինեան , Բարիզու , Վատիկանեան
և Տաւրինեան թանգարանաց : Կը պա-
րունակեն թագաւորաց պատմութիւնն ,
եգիպտացւոց աստուածաբանական և
բարոյական գիտութիւնն , ուսումնա-
կան գրքեր , բանաստեղծութիւնք , և
սրբազան արարողութեանց վերայ գը-
րուածներ , որոց մէջ երևելի է յուշար-
կաւորութեան արարողութեանց բո-
վանդակ հաւաքումն , զոր հմուտը ընդ-
հանրապէս « Գիրք մեռելոց » կը կոչեն :
Այս ամէն բաներս առատ նիւթ են
հմտաց , գիտնալու թէ հին եգիպտոսի
վիճակն՝ Աբրահամու , Մովսիսի և Մար-
գարէից ժամանակ ինչպէս էր , և թէ
այս հին ողբին պատմութիւնը կարելի
է այս վաւերական , յիշատակարաննե-
րէն յօրինել կամ վերանորոգել : Այս
բանիս համար բազմաթիւ գիտնականք
Եւրոպիոյ այլ և այլ ազգերէն՝ մեծ գո-
վութեամբ աշխատեցան , որոնց ջան-
քով՝ Եգիպտաքանուորիւնն ինչպէս ի-
րենք կը կոչեն , զարմանալի կերպով
յառաջադիմեց և օր ըստ օրէ ընդար-
ձակեցաւ : Սակայն այս յառաջագի-
մութիւնն անկարելի պիտի ըլլար , և
թէ Եգիպտական գիրն անմոռօթ մնա-
ցած ըլլար : Անոր համար հոս քիչ մը
բան ըսենք , թէ ինչ կերպով այս գի-
րը կարդալու յայտնեցան :

Այս գիւտիս փառքն , ինչպէս ոչ որ
կը ժխտէ՝ Շամբլիոնի պարտական
եմք , որ Գաղղիոյ Ֆիթաք գեղին մէջ
ծնաւ 1790ին , և մեռաւ դեռ երիտա-
սարդ 'ի Բարիզ 1832ին , Արդ ինքն Ե-
գիպտոսի վրայօք եղած նոր քննութիւն-
ներէն վառուած , բուրբովին ինքզինքը
նուիրեց Հնագիտութեան այս մասին ,

մեհննագրոց գաղտնիքը գտնելու ջան-
քով , առանց որոյ անկարելի կը հա-
մարէր Եգիպտական գիտութեան յա-
ռաջադիմութիւնը , Ղպտիական լե-
զուն , զոր գիտէր թէ եգիպտական հին
լեզուն է , որով գրուած էին շատ մը յի-
շատակարանք , մեծ օգնութիւն եղաւ
իրեն , զոր ուսանելով սկսաւ այն ատեն
մեհննագրական ծանօթ նշանագրերը
մեծ խնամքով քննել և բաղդատել ի-
րարու հետ : Յետ քանի մի անօգուտ
փորձերու , իր աշխատութիւնը երկէ-
զուեան սիւնի մը վերայ գրուածը կար-
դալու ամփոփեց , որ սովորաբար վէմ
Ռոպելլիայ կը կոչուի , Եգիպտոսի մէջ
Ռոպելլիայի քով գտնուած ըլլալուն
համար 'ի 1799 , Պուշար անուամբ
գինուորէ մը , երբ Ս . Յուլիանոսի կա-
մարը զօրացնելու կ'աշխատէր : Այս
սիւնը՝ որ Հնախօսութեան մէջ այն-
չափ հռչակաւոր եղաւ՝ մեհննագրու-
թեան բանալին ցուցնելուն պատճա-
ռաւ , սեւ մարմարինէ է , 10 ոտք բար-
ձրութեամբ , 3 1/2 լայնութեամբ , մէկ
կողմը կը գտնուի 3 սեան բաժնուած՝ 3
այլ և այլ լեզուներէ մակագրութիւն
մը , ոյսինքն է մեհննական , գեմաութի-
կեան (այսինքն , Հնոյն Եգիպտոսի ժո-
ղովրդականն) և յունական : Եւնա-
կան սիւնն՝ որ 54 տողէ կը բաղկանայ ,
կը պարունակէ Եգիպտոսի քահա-
նայից հրամանն՝ որ կը պատշաճի 'ի
վճիռ կանգման արձանաց և պատուոյ՝
աստուածայնոյն Պտղոմէոս Եպիփան
թագաւորին : Քիչ վերջը փորրիկ յի-
շատակարան մ'ալ բերուեցաւ փրկա-
կղզիէն , յորում կը կարդայուէր նմա-
նապէս եգիպտական մակագրութիւն
մը , յունարանն ալ թարգմանուած 'ի
պատիւ իղէոպատրայ : Ռոպելլիայի
մակագրութեան մէջ Պտղոմէոս բառն
5 անգամ կը հանդիպէր , իսկ փի-
լայինին մէջ իղէոպատրան : Եւնական
սիւնն յայտնապէս ուրիշ բան չէր բայց
եթէ եգիպտական մակագրութեան
թարգմանութիւնն , և հաւասարապէս
պէտք էր մի և նոյն անունները բովան-
դակել , ուստի Շամբլիոն մէկէն ըմ-

բռնեց թէ ասոնցմով կրնայ սկսիլ. վասն զի յատուկ անուանները քիչ շատ որ և իցէ լեզուի մէջ նոյն կերպով կը հնչուին : Ծանօթ է գիտնաւորաց՝ թէ թագաւորաց անուաներն մեհնաւ գրական յիշատակարանաց մէջ եւան. կեան մէջ կը փակուէին , որպէս զի մնացած մասէն զիրազոյն որոշուին : Այսու գիւրին եղաւ իրեն Ռոգեդգայի սեան մէջ Պտղոմէոսի անունը զանա. զանել, որ 8 մեհնազրէ կը բաղկա. նար և 5 անգամ յունական թարգմա. նութեան նման կըկնուած էր . նոյնպէս միւս յիշատակարանին մէջ կղէոպա. տրայի անունը նշանեց, որ 11 նշանէ կը բաղկանար : Այս նշաններուն թուէն մէկէն հասկըցաւ որ կենդանեաց, բու. սոց, և այլն, նշաններն այբուբենի յար. մարդուած են, կամ ներկայացուցի ի. րաց՝ եղիպտական անուան առաջին զիրը միայն կը ցուցընեն և ոչ ամբողջ զաղափարը, ինչպէս ատենօք համարեր էին ոմանք : Դիտեց զխաւորապէս որ Պտղոմէոսը և կղէոպատրայ յունական անուանց մէջ շատ զբեր նոյն են, ինչ. պէս պ, ա, ո, ե, դ, որոց պիտի հա. մապատասխանէին իւր կարծեաց հա. մեմատմի և նոյն մեհնազրական նշան. ներն այս երկու անուանց մէջն ալ : Զայս ուշի ունեւով՝ սկսաւ նշանները բաղդատել : Պտղոմէոս կամ ըստ յու. նին Պտողոմէոս անուան առաջին նշանն (որ փոքրիկ ուղղանկիւն մ'է) եթէ պ զբեր կը ցուցընէ, պէտք է նաև կղէոպատրա անուան մէջ հինգե. րորդ տեղը գտնուի . և իրաւցընէ կը գտնենք մի և նոյն տեղը . երրորդ նշա. նը (չուանեայ հանգոյց մը) եթէ ո զբերն տեղ զրուած է, պէտք է կղէոպա. տրա անուան մէջ չորրորդ տեղը զբու. նուի, և յիբաւի հոն կը տեսնենք : Ու. րիշ նշան մը կղէոպատրայի մէջ (ըն. կողմանեալ առիւծու մը կերպա. րանք) եթէ դ զբերն է, պէտք է Պտո. ղոմէոս բառին մէջ չորրորդ տեղը գտնուի . և այնպէս ալ է : կղէոպա. տրայի վեցերորդ նշանն (արծիւ) չի զբու. նուիբ Պտողոմէոս անուան մէջ, բայց

Պրնա Գ.

մի և նոյն անուան իններորդ տեղը կրկին գտնուելով՝ այլ ամենին տարա. կոյս չի մնար ըսելու թէ ա զբերն տեղն է : Այսպէս կամաց կամաց յանձա. նօթն յառաջադիմելով ծանօթ իրէ, և ուրիշ մակագրութեանց վերայ դի. տողութիւններ ընելով՝ երբ յատուկ ա. նուաներ կը հանդիպէին, կրցաւ Շամ. րոյլին մեհնազրական նշանաց ար. ժէքն որոշել և դրութեան մը վերածել եղիպտական այբուբենը . որով անկէց վերջը իր յաջորդներէն և ուրիշ ի վերոյ յիշեալ հմուտ անձինքներէ մե. ծապէս կատարելագործուեցան՝ շատ յիշատակարաններ իրարու հետ բաղ. դատելով : Այսպէս այն անձանց ջան. քով գտնուեցաւ՝ որ մեհնազրական գիրն երկու տեսակ նշան կը բովան. դակէ, յորոց ոմանք կամ ձայնաւոր կամ բաղաձայն գրոց ձայնը կը բացա. տրեն և անոր համար ձայնակաւնք կո. յուած են : Արդէն Շամբոյլին ի սկզբա. նէ ֆիլայի արձանագրութենէն կար. ծիք մ'ունեցեր էր այս բանիս վերայ, ուր կղէոպատրա անուան ա յետին զրէն վերջը, ուրիշ երկու նշաններ կը տեսնուին, որ յունական անուան մէջ դուրս ձգուած են . ուստի մի միայն ո. րոշիւ նշաններ էին իդական անուան, և այս յայտնապէս երեցաւ յետոյ ու. րիշ արձանագրութիւններէ :

Ասկէց զատ շատ ձայնական նշան. ներ երբեմն մի և նոյն ձայնը կը ցու. ցընեն, և անոր համար համաձայն կը կոչուին . իսկ շատեր ալ ոչ միայն զիւր մը, այլ ամբողջ վանկ մը կը ներկայա. ցընեն, և այս պատճառաւ վանկակաւն կ'ըսուին, ասոնցմէ զատ կը գտնուին նաև նշաններ՝ որ ամբողջ զաղափար մը կը ներկայացընեն, որով և կ'ա. նուանին գաղափարաւոր նշաններ, որք նոյն իսկ իւր ուղղակի կը ներկա. յայընեն քան թէ նոյն իւր կազմիւղ տառից քանիւով : Ուսկից կ'երևի թէ մեհնազրական գրութիւնն շատ ընդ. արձակ է և բազմաթիւ զանազան նշաններէ բաղկացած, զորս Պրիւկշ մինչև յ3000 կը հաշուէ : Թէ այս

պատճառաւ, և թէ՛ որովհետեւ այս գրութիւնն շատ տեղ կը բռնէ և թէ՛ միանգամայն շատերուն համար դիւրին չէ այն գոնազոն իրական և այլաբանական իրերը գծագրել և նկարել, սկսաւ պարզագոյն ձեւն վերածուիլ, յորում իրենց ոչ ամբողջ ձեւը, այլ միայն գլխաւոր գծերն կ'երևնային, և այս ձեւ Շամբուլիոն կոչեց սրբազան գրութիւն. յետ ժամանակաց քաղաքական և մաւ տնտեսական պիտոյից համար՝ դեռ

աւելի պարզ և աւելի դիւրնթեւնի ձևի վերածուեցաւ Շաքարայ և Տա. հրակուայ թագաւորութեան ժամանակէն սկսեալ (ըստ կարծեաց Մաս. բերոյի), որ և սովորական և ժողովրդական գործածութեան պատճառաւ Դիմուտիկեան, այսինքն ժողովրդայն կան ըսուեցաւ: Այս յետին տեսակ գրով դրոշմուած է Ռոգեդդայի արձաւ նազրութեան միւս սիւնն, ինչպէս պաւ պիւրներու մէջ ալ կը հանդիպի:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴ ԳՕՔԼԷՆ

(ՏԵՍ ԷՂ 161)

Դ

Որ ինչ 'ի թատերաբեմն կը տեսնուի' Գօքլէն քան զայն տգեղագոյն է 'ի բնէ, կամ լաւ ևս ըսելով՝ օտարոտի գէպը ունի: Եթէ դը առաջին անգամ տեսնէ զինքն արեւու լուսով իւր տան մէջ, իսկոյն յապուշ հարեալ կը մնայ իւր տաղանդին մեծութեան և գուսաւ նական բնածին ձրից վրայ, որովք՝ հանդերձ իւր գրեթէ անհեթեթ և անկանոն գծագրութեամբն՝ կըցաւ յաւ ջողիլ և յաղթանակել:

Լայնանիստ և գիրուկ երեսն՝ ճշմարիտ դիմակ մ'է վաղիմի ինդկատակաց. հոյանտացի վաճառականի նման դեղնագոյն է մորթը. մեծ քթի մը վրայ՝ սակաւ ինչ չարաճճի աչքեր կը վալկիլին՝ նման կուզի խորշագոյն աւաց. իսկ քիթն՝ աննման յանգզնութեամբ այնքան 'ի վեր կը նայի, որ առջուկն որսի հրացանի կրկին փողոց ծակերուն նման տնկուած են. բերանն մեծ է՝ ամենաթանձր և սեղաւ նաձէ չրթամբը, որովք թուի իմն թէ հանապազ տաճկական մեծ ծխաբարչ

մը կը ծծէ. երկայն և դուրս ցցուեալ կզակ մը՝ առիւծանման կրկին ծնօտիւք, որք 'ի խօսելն կ'ընդլայնին: Այս անմօրուս գրութիւնը, նման աղբերաց ճաւկատը դրուած մարմարեայ զլխոց, որ սե գտակաւ մը ծածկուած է, դիր կարճ և ստուար մարմնոյ մը վրայ, որ ցմէյն ամփոփեալ է սեղմ թխագոյն հանդերձիւ, և սեւաւ կօշիկ յոտն և սեւաթոյր հողաթափք, և երեակայէ թէ ինչ տարօրինակ խառնուրդ մի մէջ. տեղ կ'երէն, այսինքն կէս մի՝ գիւղի ժողովրդապետ մը տան զգեստով, կէս մի՝ 'ի սուգ համակեալ խոհակեր մը, և այլ կէս մի՝ չրջող հագներգու մը, որ է ըսել՝ ասոնցմէ ձևացած նորատես սիւլ անձ մը: Երբ մտածէ մարդ թէ սա գաճաճն զմեզ յարտասուս շարժեց, սարսուցիւց և դողացուց՝ շուարած կը մնայ, մինչև փորձութիւն իսկ կու գայ ըսելու առ նա թէ մարդիկ ծաղրելու կերպն այս չէ:

Սակայն այն տգեղ անձանցմէ է Գօքլէն, որ զմարդ կը հրապուրեն. քանզի թերեւ, ինչպէս առակ է ըսել, անոնց տգեղութիւնը թերի գեղեցկութիւն մ'է. ինչպէս կը լսուին երբեմն